«Նոր ժամանակի կրթությ ուն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վիկտորյա Խոջաբեկյան

Ուսումնական հաստատություն՝ Իրինդի Մ. Քոթանյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3
Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական --- 4
կարիքների բացահայտումը ---------- 4
Եզրակացություն ---------- 14
Օգտագործված գրականության ցանկ ---------- 15

Ներածություն

Թեմայի կարևորությունը։ Առաջին բաղադրիչը մոտիվացիան է։ Ուսումնական գործունեությունը բազմադրդապատճառականցված է. այն դրդվում և ուղղորդվում է ուսումնական տարբեր դրդապատճառներով։ Նրանցում կան դրդապատճառեր՝ առավել ադեկվատ ուսումնական խնդիրներին. եթե նրանք ձևավորվում են աշակերտի մոտ, նրա ուսումնական գործունեությունը դառնում է արդյունավետ, իմաստավորված։ Դ. Էլկոնինը դևանք անվանել է ուսումնա-ճանաչողական դրդապատճառներ։ Նրանց հիմքում ընկած են ճանաչողության և ինքնազարգացման պահանջմունքները։ Երեխան պետք է մոտիվացված լինի ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքով այլև հենց նրա գործընթացով։ Սա նաև սեփական անձնային աճի, ինքնակատարելագործման, ընդունակությունների զարգացման դրդապատճառն է։

Երկրորդ բաղադրիչը ուսումնական խնդիրն է, այսինքն՝ առաջադրանքների համակարգը որոնց կատարման ընթացքում երեխան յուրացնում է գործողությունների առավել ընդհանուր միջոցներ։ Ուսումնական խնդրիրը անհրաժեշտ է տարբերել առանձին առաջադրանքներից։

Սովորաբար երեխաները, լուծելով մեծ քանակությամբ կոնկրետ առաջադրանքներ, իրենք են տարերայնորեն բացահայտում նրանց լուծման ընդհանուր միջոցը, ընդ որում այն միջոցը տարբեր աշակերտների կողմից գիտակցվում է տարբեր չափով։ Զարգացնող ուսուցումը ենթադրում է երեխաների և ուսուցչի կողմից խնդիրների մի մեծ խմբի լուծման միջոցի համատեղ բացահայտում և ձևակերպում։ Այս դեպքում ընդհանուր միջոցը դառնում է օրինակ և հեշտ տարածվում է այդ դասի այլ առաջադրանքների վրա, ուսումնական գործունեությունը դառնում է առավել արդյունավետ, իսկ սխալներն աստիճանաբար վերանում են։

Թեմայի նպատակ՝ ուսումնասիրել ուսումնական գործունեության էությունը։

Իմ առջև դրվեցին հետևյալ խնդիրները՝

1. Ներկայացնել ուսումնական գործունեությունը:
2. Վերլուծել երեխաների ուսումնառության բացահայտումը:

Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Երեխաները պետք է յուրացնեն բառի նշանակության և ձևի միջև կապը: Դրա համար էլ նա յուրացնում է բառի հետ գործողության հիմնական միջոցները. պետք է փոխել բառը, համեմատել այն նոր ձևավորվածի հետ և իմաստային և ձևի առումներով, դուրս բերե; կապ ձևի և նշանակության փոփոխությունների միջև:

Ուսումնական օպերացիաները երրորդ բաղադրիչն են և մտնում են գործողությունների միջոցի մեջ: Օպերացիան և ուսումնական խնդիրը ուսումնական գործունեության կառուցվածքի հիմնական օղակն են:

Յուրաքանչյուր ուսումնական օպերացիա պետք է մշակված լինի: Աշակերտը, կողմնորոշվելով օպրեացիաների կազմում, կատարում է դրանք նյութականացված՝ ուսուցչի վերահսկողության տակ: Սովորելով դա անել գրեթե անսխալ՝ նա անցում է կատարում արտասանմանը, և վերջապես, օպերացիաների կազմի կրճատման փուլում նա արագ լուծում է խնդիրը մտքում՝ հաղորդելով ուսուցչին պատրաստի պատասխանը:

Չորրորդ բաղադրիչը հսկողությունն է: Սկզբնապես աշակերտների ուսումնական գործունեությունը հսկում է ուսուցիչը: Բայց աստիճանաբար նրանք սկսում են իրենք հսկել իրենց: Առանց ինքնավերահսկողության հնարավոր չէ ուսումնական գործունեության լիրաժեք զարգացումը, դրա համար էլ հսկողության ուսուցանումը կարևորագույն և բարդ մանկավարժական խնդիր է: Բավարար չէ աշխատանքը հսկել միայն վերջնական արդյունքի հիման վրա, երեխայի համար կարևոր է ուսումնական գործունեության ամբողջ ընթացքի հսկողությունը: Աշակերտին սովորեցնելը՝ վերահսկելու իր ուսումնական գործունեության ընթացքը, նշանակում է նպաստել այնպիսի հոգեկան ֆունկցիայի ձևավորմանը, ինչպիսին ուշադրությունն է:

Հսկողության վերջին փուլը գնահատկանն է։ Այն կարելի է համարել ուսումնական գործունեության հինգերորդ բաղադրիչ։ Երեխան, հսկելով իր գործունեությունը, պետք է կարողանա և ադեկվատորեն գնահատել այն։

Մյուս կողմից, ուսուցիչը, գնահատելով աշակերտների աշխատանքը, չի բավարարվում միայն միավորներ դնելով։ Երեխաների ինքնազարգացման համար կարևոր է ոչ այնքան միավորը որպես այդպիսին, այլ բովանդակային գնահատկանը, այսինքն՝ բացատրությունը՝ ինչու է դրվել այս կամ այն գնահատական-միավորը, ինչ դրական և բացասական կողմեր ունի պատասխանը։ Բովանդակայնորեն գնահատելով ուսումնական գործունեությունը, նրա արդյունքները, գործընթացը ուսուցիչն առաջադրում է որոշակի կողմնորոշիչներ՝ գնահատման չափանիշներ, որոնք պետք է յուրացվեն երեխաների կողմից։

Կրտսեր դպրոցականները բարձր են գնահատում իրենց աշխատանքը, եթե նրա վրա նրանք ծախսել են շատ ժամանակ, ջանքեր՝ անկախ այն բանից, թե ինչ են ստացել արդյուքնում։ Ուրիշ երեխաների աշխատանքին նրանք առավել քննադատաբար են մոտենում, քան իրենց սեփականին։ Այս կերպ երեխային սովորեցնում են գնահատել ոչ միայն իրենց աշխատանքը, այլև համադասարանցիների աշխատանքը՝ բոլորի համար ընդհանուր կարոններով։ Հաճախ օգտագործվում են այնպիսի հնարներ, ինչպիսիք են օրինակ՝ պատասխանների կոլեկտիվ քննարկումը։ Այս հնարները դրական էֆեկտ են թողնում տարրական դպրոցում

Ուսումնական գործունեությունն, ունենալով բարդ կառուցվածք, անցնում է կայացման երկարատև ուղի։ Նրա զարգացումը շարունակվում է ամբողջ դպրոցական կյանքի ընթացքում, բայց հիմքերը դրվում են ուսուցման սկզբնական տարիներին։ Դպրոցական ուսուցանումը տարբերվում է ոչ միայն երեխայի գործունեության հատուկ սոցիալական նշանակալիությամբ, այլև մեծերի օրինակների և գնահատականների հետ հարաբերությունների միջնորդավորվածությամբ։ Այս առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնական գործունեության յուրահատկությունը ազդում են երեխայի հոգեկան ֆունկցիաների, անձնային կազմավորումների, կամային վարքի զարգացմանը։

Ուսումնական գործընթացի նպատակադրումը ձեւավորվում է ուսումնաճանաչողական դրդապատճառներով, որոնց թվին են պատկանում

ուսումնական գործողությունների ընդհանրացված եղանակներ ձեռք բերելու դրդապատճառները:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»:

Ուսումնական գործընթացի կառուցվածքի կարեւորագույն բաղադրամասերը կազմում են ուսումնաճանաչողական դրդապատճառները, ուսումնական պահանջմունքները: Դրանք եւ կազմում են հիմքը, որի ձեւավորումը ուսուցման հիմնական խնդիրներից մեկն է: Ուսուցման հետագա հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, թե որքանով են դեռեւս տարրական դասարաններում ձեւավորվել այդպիսի դրդապատճառներ: Եթե ուսուցչին հաջողվում է ձեւավորել նման դրդապատճառներ, ապա դրանք, ստանալով նոր բովանդակություն, նպաստում են գործունեության այն ընդհանուր դրդապատճառների ձեւավորմանը, որոնք կապված են դպրոցական դիրքորոշման հետ:

Մասնագիտական-մեթոդական որակների զարգացման դասընթացների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անընդհատ ձևավորվում են նոր ուսումնամեթոդական համալիրներ, ստեղծվում են ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, ուսումնաօժանդակ տարատեսակ նյութեր և միջոցներ: Մատչելի են դարձել տեղեկատվական թվային տեխնոլոգիաները՝ բջջային հեռախոս, թվային ձայնագրիչ, թվային ֆոտոխցիկ, համակարգիչ:

Ուսումնաճանաչողական դրդապատճառները տարբերվում են ճանաչողական հետաքրքրություններից նրանով, որ դրանք ոչ թե պարզապես ուղղված են շրջապատող իրականության երեւույթների մասին տեղեկատվության ձեռքբերմանը, այլ ուսումնասիրվող ուսումնական առարկայի կոնկրետ բնագավառում անհրաժեշտ գործողության եղանակների յուրացմանը:

Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Նրանք գտում են ավելի շատ բան իմանալ բնական երևույթների, մարդկանց ու շրջապատող աշխարհի մասին: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են

տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներին: Նրանց այս հատկությունը, եթե խելացի ուսուցչի կողմից ճիշտ ուղղություն ստանա, ապա կարող է դառնալ նրանց մտահորիզոնի և գիտելիքների ընդլայնման հոգեբանական հիմք: Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը:

Ե. Սմիրնովան գրում է. «Երեխային պետք է շփում հասակակիցների, այլ երեխանեի հետ: Հնարավոր է, այսպիսի հաստատումը թվա տարօրինակ, քանի որ երեխաները կրտսեր դպրոցական տարիքում դեռևս չեն կարողանում խաղալ միասին, կարողանում են խաղալ միայն կողք կողքի: Բայց նրանք ընդօրինակելու հակում ունեն և ունակ են վարակել մեկը մյուսին այս կամ այն իրավիճակը. ոչ միայն լացը կամ վախը, այլ նաև ուրախությունը, ծիծաղը, ուրախ վազքը և դրանից ստանում են անպատմելի հաճույք»:

Երեխաները հաճախ դժվար են հարմարվում դպրոցին, նրանք մտնում են նոր միջավայր, որտեղ իրենց անծանոթ մարդիկ են շրջապատում: Հաճախ հարմարվողականությունը ուղեկցվում է նյարդային և էմոցիոնալ խանգարումներով: Պատկերավոր ստեղծագործությունը համարվում է երեխանիերի ամենասիրելի զբաղմունքներից մեկը: Երեխայի մոտ առաջանում են բնական ցանկություն նկարելու միջոցով նկարին փոխանցի իր տեսածի և ապրածի մասին տպավորությունները: Նա վերցնում է մատիտներ, ներկեր, վրձիններ, թուղթ և սկսում է ստեղծագործական պրոցեսը: Դրա օգնությամբ երեխան կարող է հաղթահարել վախերը և սրա հետևանքով հարմարվողականության գործընթացը ավելի հեշտ տեղի կունենա:

Հարմարումը օրգանիզմի հարմարվողականությունն է նոր պայմաններին, իսկ երեխայի համար մանկապարտեզն է, անկասկած, համարվում է նոր, նրան դեռ անհայտ տարածություն՝ նոր շրջապատով և նոր հարաբերություններով: «Հարմարումը հանդիսանում է ակտիվ գործընթաց, որը տանում է կամ դեպի դրական (հարմարեցումը, այսինքն, օրգանիզմի և հոգեկանի օգտակար փոփոխությունների ամբողջություն) արդյունքի կամ բացասական (սթրես): Այդ դեպքում առանձնացնում են հաջող հարմարման երկու հիմնական չափանիշներ. ներքին հարմարություն

(էմոցիոնալ բավարարվածություն) և վարքի արտաքին ադեկվատություն (ունակ է հեշտ և հստակ իրականացնել միաջավայրի պահանջմունքները)»:[1]

Հարմարվողականությունը կարելի է դիտարկել նաև որպես սոցիալականացման մի մաս և նրա մեխանիզմի որակ: Առանձնացնում են հարմարվողականության երկու տեսակ. հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական: Նրանց միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը իրենից ներկայացնում է անհատի դերի տիրապետում նոր սոցիալական իրավիճակ մուտք գործելու ժամանակ: Ըստ արդյունքների սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը լինում է տարբեր. դրական, բացասական, ըստ իրականացման մեխանիզմի՝ ինքնակամ և հարկադիր: Սոցիալ-հոգեբանական հարմարվողականության գործընթացը բաժանվում է մի քանի փուլերի.

- ճանաչողություն; • դերային կողմնորոշում;
- ինքնահաստատում:

Հարմարվողականությունը իր մեջ ներառում է անհատական ռեակցիաների լայն սպեկտոր, որոնց բնույթը կախված է երեխայի հոգեֆիզիոլոգիական և անհատական առանձնահատկություններից, ձևավորված ընտանեկան հարաբերություններից, դպրոցական հաստատությունների պայմաններից: Յուրաքանչյուր երեխա ընտելանում է իր ձևով:

Վերջին ժամանակներս անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնք վերաբերում են այն խնդրին: Նման հետազոտությունների մեծ մասը վերաբերվում էր, առաջին հերթին, այնպիսի խնդիրներին, ինչպիսին են տարբեր հոգեբանական, սոցիալական խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականների ուսումնական դժվարությունները (Օ. Գ. Վլասովա, 1998; Մ. Վ. Գալիմզյանովա, 2006; Ն. Վ. Գոլովկո, 2004; Վ. Գ. Կամենսկայա, 1993; Ե. Ա. Կամիներ, 2001; Ի. Մ. Նիկոլսկայա 2006; Ս. Ա. Օշան 2004; Ռ. Լ. Պատրիկ 2005; Ի. Դ. Ստոիկով 1986):

[1] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2.Բաբանսկի հատոր առաջին
3.Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ

Կրտսեր դպրոցականին ուսումնասիրելու ամբողջական (Բ. Գ. Անանև, 1980, 2001), հոգեկանի զարգացման մշակութա-պատմական կոնցեպցիա (Լ. Ս. Վիգոտսկի, 1956, 1960, 1991), հոգեվերլուծության շրջանակներում անհատի հոգեբանական պաշտպանության տեսության հիմնական դրությունը (Վ. Գ. Կամենսկայա, 1993, Ժ. Լապլանշ, 1996, Է. Ֆրոմ, 1990, 1998): Սոցիալական ադապտացիայի գործընթացների վերլուծությունը հիմնվում է մի շարք ռուս հոգեբանների տեսությունների և հատկապես գործունեության կոնցեպցիայի (Ա. Ն. Լեոնտև, 1981, Դ. Բ. Էլկոնին, 1971, 1995, 2004) և շփման կոնցեպցիայի (Մ. Իլիսինա, 1974, 1983; Ա. Գ. Ռուզսկայա, 1974) վրա:

Կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է 6-9-10տարեկանը և որոշվում է երեխայի կյանքում կարևոր հանգամանքներով՝ նրա դպրոց գնալով: Այս ժամանակ տեղի է ունենում երեխայի օրգանիզմի (կենտրոնական և վեգետատիվ նյարդային համակարգ, ոսկրային և մկանային համակարգ, ներքին օրգանների գործունեություն) ինտենսիվ կենսաբանական զարգացում: Այսպիսի վերակազմավորման հիմքում (անվանում են նաև երկրորդ ֆիզիոլոգիական ճգնաժամ) ընկած է հստակ էնդոկրին տեղաշարժ՝ գործողության մեջ ներառելով ներքին արտազատման «նոր» գեղձեր, իսկ դադարում են գործել «հները»: Թեև այս ճգնաժամի ֆիզիոլոգիական էությունը դեռևս ամբողջությամբ սահմանված չէ, ըստ մի շարք գիտնականների, գրեթե 7 տարեկանում դադարում է մակուղեղ գեղձի ակտիվ գործունեությունը, որի արդյունքում սեռային և մի շարք ներքին սեկրեցիաների այլ գեղձերի գործունեության հետ հանվում է արգելակը, օրինակ, մակերիկամային կեղևը և գիպոֆիզը, որը սկզբնավորում է այնպիսի սեռային հորմոնների, ինչպիսիք են անդրոգենները և էստրոգենները: Այսպիսի ֆիզիոլոգիական վերակառուցումը ամբողջ պահուստի մոբիլիզացիայի համար երեխայի օրգանիզմից պահանջում է մեծ լարվածություն:

Ֆիզիոլոգիական ձևափոխությունն երեխայի հոգեկան կյանքում առաջացնում է մեծ փոփոխություն: Հոգեկան զարգացման կենտրոնում առաջ է գալիս կամային ոլորտի ձևավորումը (նախագծում, գործողության և վերահսկման իրականացում): Տեղի է ունենում ճանաչողական գործընթացների (ընկալման, հիշողության, ուշադրության) կատարելագործում, բարձր հոգեկան գործառույթների (գրավոր և բանավոր խոսքի, հաշվման) ձևավորում, որը թույլ է տալիս կրտսեր դպրոցական տարիքի երեխային իրականացնել արդեն ավելի բարդ մտածողական գործողություններ: Ուսուցման

բարենպաստ պայմանների և բավարար մտավոր զարգացման մակարդակի դեպքում, այս հիմքի վրա առաջանում են ստեղծագործական մտածողության և գիտակցվածության զարգացման ենթատեքստեր:

Ուսուցչի ղեկավարությամբ երեխաները սկսում են յուրացնել մարդկային կուլտուրայի հիմնական ձևերի (գիտություն, արվեստ, բարոյականություն) բովանդակությունը և սովորեցնում է գործել սովորույթներին և մարդկանց նոր սոցիալական սպասումներին համապատասխան: Հենց այս տարիքում երեխան առաջին անգամ հստակորեն սկսում է գիտակցել իր և շրջապատի միջև հարաբերությունը, հասկանում է վարքի, բարոյական գնահատականների հասարակական դրդապատճառները, կոնֆլիկտային իրավիճակի նշանակությունը, այսինքն, աստիճանաբար մուտք է գործում անհատի ձևավորման գիտակցական փուլ:

Դպրոց հաճախելը դա երեխայի կյանքում այնպիսի իրադարձություն է, որում, անպայման, տեղի է ունենում նրա վարքի երկու որոշիչ դրդապատճառների հակասություն. ցանկության դրդապատճառը («ուզում եմ») և պարտավորվածության դրդապատճառը («պետք է»):

Երեխայի մոտ յուրաքանչյուր պաշտպանական մեխանիզմ սկզբում կոնկրետ բնազդային շահագրգռիչների տիրապետման համար ձևավորվում են և կապված է անհատական զարգացման որոշակի փուլի հետ: Դրանց ձևավորման շահագրգիռներ են հանդես գալիս օնտոգենեզում առաջացած բազմապիսի տագնապները, որոնք հատուկ են երեխաներին:

Բոլոր հոգեբանական գործընթացների նման պաշտպանական մեխանիզմներն ունեն իրենց օբյեկտիվ արտահայտությունը՝ մարդու գործողությունների, էմոցիաների կամ դիտարկումների մակարդակի վրա արտաքին դիտարկման և ամրագրման նշանները: Մի քանի ժամանակակից հետազոտողներ կարծում են, որ պաշտպանական մեխանիզմները, առաջին հերթին, ամուր պաշտպանական վարքային պատկեր է. արտաքին դիտարկման գործողություններ, էմոցիաներ և մտածողության արտահայտություն, որոնք կատարում են տագնապային իրավիճակներից խուսափելու ֆունկցիա:

Հաղորդակցման ժամանակ հաճախ են ծագում դժվարություններ, որոնք ունենում են թե հոգեբանական, թե սոցիալական դրդապատճառներ: Մանկավարժական պրակտիկայում դրանք ծագում են հիմնականում այն պատճառով, որ հաղորդակցվող

մի կողմը՝ երեխան, գտնվում է ինքնաճանաչողության փուլում ունի ցայտուն արտահայտված ինքնահաստատման պահանջմունք: Մյուս կողմը՝ մանկավարժը, մշտապես փորձում է գերակայող դիրք ընդունել և երեխային ենթարկել իր հրահանգներին ու պահանջներին: Այստեղից կրտսեր դպրոցական տարիքի երեխայի մոտ սկսվում է ձևավորվել պաշտպանական մեխանիզմներ:

Մանկավարժի հաղորդակցման ոճը որոշիչ նշանակություն ունի ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետությանը, ինչպես նաև երեխայի պաշտպանական մեխանիզմների ձևավորմանը:

Մանկավարժը պետք է հնարավորինս զգույշ լինի երեխայի հետ հաղորդակցման ժամանակ: Կախված ուսուցչի հաղորդակցական ոճից երեխան սկսում է իր համար ընտրել որոշ պաշտպանական մեխանիզմներ, որոնք իրեն կարող են պաշտպանել ուսուցչի քննադատություններից:

Տարրբերակում են ուսուցչի գործունեության մի քանի ոճեր: Հաղորդակցման ժամանակ ուսուցչի առաջին դիրքորոշումը արտացոլում է նրա կողմնորոշումը դեպի անձը, ամեն հարցում նա իր մեջ փնտրում է թերություններ ու ձեռքբերումներ: Երկրորդի ժամանակ ուսուցիչը փորձում է դիմացինի մեջ գտնել հաղորդակցմանը խանգարող հատկանիշներ: Ոչ խոսքային հաղորդակցումը ուսուցչի շարժումների, դիրքի, տեսքի և ձայնի դրսևորումներն են՝ խոսքային տեղեկությունների, երկխոսության փոխանցման ժամանակ: Ոչ խոսքային հաղորդակցման միջոցները ծառայում են խոսքի իմաստի շեշտադրումը ուժեղացնելու համար: Կարող ենք ասել, որ կրտսեր դպրոցական տարիքում պաշտպանական մեխանիզմների ձևավորման վրա իր մեծ ազդեցությունն ունի ուսուցչի հաղորդակցման ոճը:

Ուսուցանման դաս-դասարանային համակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի հետ, այլև այլ երեխաների հետ հատուկ հարաբերություններ: Ուսումնական գործունեությունն իր բնույթով կոլեկտիվ գործունեություն է: Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ գործնական հաղորդակցմանը, արդյունավետ փոխազդելու կարողությանը՝ կատարելով համատեղ ուսումնական գործողություններ: Հասակակիցների հետ շփման նոր ձևը հաստատվում է դպրոցական ուսուցման հենց սկզբից:

Հոգեկան զարգացման բարձր մակարդակով 6 տարեկան երեխաների համար բնութագրական է համագործակցային-մրցակցային շփումը տարիքակիցների հետ:

Նրանք հետևում են ընդհանուր խաղային նպատակին, բայց միմյանց համարում են մրցակիցեր, հակառակորդներ։ Նրանք պլանավորում են իրենց գործողությունները՝ կանխատեսելով արդյունքը, հետևելով ընկերոջ գործողություններին, փորձելով նրան խանգարել։

Դպրոցին անձնային պատրաստվածությունը ներառում է նաև որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ։ Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է ադեկվատ վերաբերմունք սեփական ընդունակությունների, աշխատանքային արդյունքների, վարքի նկատմաբ, այսինքն՝ ինքնագիտակցության զարգացվածության որոշակի մակարդակ։ Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի շատ բարձր և չտարբերակված։

Դպրոցին երեխայի պատրաստվածության մասին սովորաբար դատում են խմբային աշխատանքներում նրա վարքով։ Այստեղ շատ կարևոր է և երեխայի կամային ոլորտի զարգացման առանձնահատկությունների դուրս բերումը։ Երեխայի վարքի կամային բնույթը դրսևորվում է ուսուցչի առաջադրած պահանջների, կանոնների կատարման ժամանակ։ Դրա համար էլ երեխայի կամային վարքի առանձնահատկությունները դուրս են բերվում ոչ միայն դիտման ժամանակ, այլև հատուկ մեթոդիկաների միջոցով։

Այսպիսով, կրտսեր դպրոցական տարիքում ուսումնական գործունեությունը դառնում է առաջնային։ Այն բավական բարդ գործունեություն է, որը պահանջում է ժամանակ և ջանքեր. 10-11 տարի։ Բնականաբար, այն ունի որոշակի կառուցվածք։

Առաջին բաղադրիչը մոտիվացիան է։ Ուսումնական գործունեությունը բազմադրդապատճառականցված է. այն դրդվում և ուղղորդվում է ուսումնական տարբեր դրդապատճառներով։ Նրանցում կան դրդապատճառեր՝ առավել ադեկվատ ուսումնական խնդիրներին. եթե նրանք ձևավորվում են աշակերտի մոտ, նրա ուսումնական գործունեությունը դառնում է արդյունավետ, իմաստավորված։ Դ. Էլկոնինը դևանք անվանել է ուսումնա-ճանաչողական դրդապատճառներ։ Նրանց հիմքում ընկած են ճանաչողության և ինքնազարգացման պահանջմունքները։ Երեխան պետք է մոտիվացված լինի ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքով այլև հենց նրա գործընթացով։ Սա նաև սեփական անձնային աճի, ինքնակատարելագործման, ընդունակությունների զարգացման դրդապատճառն է։

Երկրորդ բաղադրիչը ուսումնական խնդիրն է, այսինքն՝ առաջադրանքների համակարգը որոնց կատարման ընթացքում երեխան յուրացնում է գործողությունների առավել ընդհանուր միջոցներ։ Ուսումնական խնդրիրը անհրաժեշտ է տարբերել առանձին առաջադրանքներից։ Սովորաբար երեխաները, լուծելով մեծ քանակությամբ կոնկրետ առաջադրանքներ, իրենք են տարերայնորեն բացահայտում նրանց լուծման ընդհանուր միջոցը, ընդ որում այն միջոցը տարբեր աշակերտների կողմից գիտակցվում է տարբեր չափով։ Զարգացնող ուսուցումը ենթադրում է երեխաների և ուսուցչի կողմից խնդիրների մի մեծ խմբի լուծման միջոցի համատեղ բացահայտում և ձևակերպում։ Այս դեպքում ընդհանուր միջոցը դառնում է օրինակ և հեշտ տարածվում է այդ դասի այլ առաջադրանքների վրա, ուսումնական գործունեությունը դառնում է առավել արդյունավետ, իսկ սխալներն աստիճանաբար վերանում են։

Որպես օրինակ՝ կարող է ծառայել լեզվի դասերի ժամանակի կառուցվածքաիմաստային վերլությունը։ Երեխաները պետք է յուրացնեն բառի նշանակության և ձևի միջև կապը։ Դրա համար էլ նա յուրացնում է բառի հետ գործողության հիմնական միջոցները. պետք է փոխել բառը, համեմատել այն նոր ձևավորվածի հետ և իմաստային և ձևի առումներով, դուրս բերե; կապ ձևի և նշանակության փոփոխությունների միջև։

Ուսումնական օպերացիաները երրորդ բաղադրիչն են և մտնում են գործողությունների միջոցի մեջ։ Օպերացիան և ուսումնական խնդիրը ուսումնական գործունեության կառուցվածքի հիմնական օղակն են։[2]

[2] 1.Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2.Բաբանսկի հատոր առաջին

Եզրակացություն

Երեխան, հսկելով իր գործունեությունը, պետք է կարողանա և ադեկվատորեն գնահատել այն։

Մյուս կողմից, ուսուցիչը, գնահատելով աշակերտների աշխատանքը, չի բավարարվում միայն միավորներ դնելով։ Երեխաների ինքնազարգացման համար կարևոր է ոչ այնքան միավորը որպես այդպիսին, այլ բովանդակային գնահատականը, այսինքն՝ բացատրությունը՝ ինչու է դրվել այս կամ այն գնահատական-միավորը, ինչ դրական և բացասական կողմեր ունի պատասխանը։ Բովանդակայնորեն գնահատելով ուսումնական գործունեությունը, նրա արդյունքները, գործընթացը ուսուցիչն առաջադրում է որոշակի կողմնորոշիչներ՝ գնահատման չափանիշներ, որոնք պետք է յուրացվեն երեխաների կողմից։

Կրտսեր դպրոցականները բարձր են գնահատում իրենց աշխատանքը, եթե նրա վրա նրանք ծախսել են շատ ժամանակ, ջանքեր՝ անկախ այն բանից, թե ինչ են ստացել արդյունքում։ Ուրիշ երեխաների աշխատանքին նրանք առավել քննադատաբար են մոտենում, քան իրենց սեփականին։ Այս կերպ երեխային սովորեցնում են գնահատել ոչ միայն իրենց աշխատանքը, այլև համադասարանցիների աշխատանքը՝ բոլորի համար ընդհանուր կարոններով։ Հաճախ օգտագործվում են այնպիսի հնարներ, ինչպիսիք են օրինակ՝ պատասխանների կոլեկտիվ քննարկումը։ Այս հնարները դրական էֆեկտ են թողնում տարրական դպրոցում

Ուսումնական գործունեությունն, ունենալով բարդ կառուցվածք, անցնում է կայացման երկարատև ուղի։ Նրա զարգացումը շարունակվում է ամբողջ դպրոցական կյանքի ընթացքում, բայց հիմքերը դրվում են ուսուցման սկզբնական տարիներին։ Դպրոցական ուսուցանումը տարբերվում է ոչ միայն երեխայի գործունեության հատուկ սոցիալական նշանակալիությամբ, այլև մեծերի օրինակների և

գնահատականների հետ հարաբերությունների միջնորդավորվածությամբ։ Այս առանձնահատկությունները, ինչպես նաև ուսումնական գործունեության յուրահատկությունը ազդում են երեխայի հոգեկան ֆունկցիաների, անձնային կազմավորումների, կամային վարքի զարգացմանը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2. Բաբանսկի հատոր առաջին
3. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ,

   «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ
4. Սերգեյ Մանուկյան Ընդհանուր մանկավարժագիտություն- 2005թ.
5. Ամիրջանյան Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ
6. Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009